



Ի՞նչ է «Վտանգների հետևանքների մեղմացման նահանգային ծրագիրը»:

«Վտանգների հետևանքների մեղմացման նահանգային ծրագիրը» (SHMP կամ Ծրագիր) վտանգների հետևանքների մեղմացման հիմնական Կալիֆորնիայի նահանգի ուղեցույց փաստաթուղթն է: Այն տալիս է նահանգի պատմական և ընթացիկ վտանգների վերլուծությունը, նկարագրում է վտանգի հետևանքների մեղմացման նահանգային նպատակներն ու խնդիրները և մանրամասն տվյալներ է հաղորդում նահանգում վտանգների հետևանքների մեղմացմանն ռազմավարությունների ու գործողությունների վերաբերյալ: Ծրագիրը ներկայացնում է մեղմացման համապարփակ ռազմավարություն վարելու՝ նահանգի հանձնառությունը աղետների հնարավոր ռիսկերն ու հետևանքները նվազեցնելու կամ վերացնելու նպատակով՝ նպաստելով աղետից հետո ավելի արագ վերականգնմանը, նվազեցնելով կյանքի և գույքի կորուստները և նպաստելով Կալիֆորնիայի նահանգում առավել զգալի դիմակայունության ստեղծմանը:

SHMP-ը լրամշակվում է հնգամյա փուլաշրջանով, ինչպես ամրագրված է «Աղետների և արտակարգ իրավիճակների դեպքում ցուցաբերվող օգնության մասին Ռոբերտ Ստեֆորդի ակտում» (Ստեֆորդի օրենք) և հնարավորություն է տալիս, որ նահանգն օգտվի անչափ կարևոր դաշնային ֆինանսավորումից: Կալիֆորնիան հրապարակել է իր առաջին SHMP-ն 2004 թվականին: Հետագա Ծրագրերը թողարկվել են 2007, 2010, 2013 և 2018 թվականներին: 2023 թվականի SHMP-ը փոխարինում է 2018 թվականի SHMP-ին և ուժի մեջ կմնա մինչև 2028 թվականի օգոստոսի 29-ը:

Ծրագրի հաստատման պահին Արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալությունը (FEMA) ճանաչեց Կալիֆորնիան որպես այն 14 նահանգներից մեկը, որը վաստակել է [«Ընդլայնված»](#) [հնարավորություններով նահանգի](#) կարգավիճակը: «Ընդլայնված» հնարավորություններով կարգավիճակը հաստատում է այն համակարգված և ակտիվ ջանքերը, որոնք տվյալ նահանգը ձեռնարկում է վտանգներից կորուստները նվազեցնելու, մարդկանց կյանքը և գույքը պաշտպանելու, ինչպես նաև առավել անվտանգ ու վտանգների նկատմամբ դիմակայուն համայնքներ ձևավորելու նպատակով: «Ընդլայնված» հնարավորություններով կարգավիճակ ձեռք բերած նահանգները նույնպես ստանում են վտանգների հետևանքների մեղմացման դրամաշնորհային ծրագրի (HMGP) լրացուցիչ հինգ տոկոսի ֆինանսավորում աղետից հետո:

Ի՞նչ ու է SHMP-ը կարևոր:

Բացի աղետների հետևանքով մարդկանց, գույքի և շրջակա միջավայրի ի հավելումն աղետների հետևանքով մարդկանց կյանքի, գույքի և շրջակա միջավայրի կորուստները նվազեցնելուն միտված մեղմացման նպատակների, ռազմավարության և գործողությունների սահմանումից, SHMP-ը նաև որպես ռեսուրս է ծառայում վտանգների հետևանքների մեղմացման նահանգային պլանավորողների համար: SHMP-ը կարևոր մեկնարկային կետ է տեղական օրենսդիրների համար, որոնք ձգտում են հասկանալ իրենց առջև ծառայած ռիսկերը և ուղիներ մշակել դրանք հաղթահարելու համար:

SHMP-ը կարևոր նշանակություն ունի նաև աղետների և վտանգների հետևանքների հաղթահարման դաշնային ծրագրեր ստանալու համար Կալիֆորնիան իրավասու դարձնելու տեսանկյունից:

- [Վտանգների հետևանքների մեղմացման դրամաշնորհային ծրագիր \(HMGP\)](#)
- [Հետիքդեհային վտանգների հետևանքների մեղմացման դրամաշնորհային ծրագիր \(HMGP-PF\)](#)
- [Դիմակայուն ենթակառուցվածքների և համայնքների կառուցման \(BRIC\) դրամաշնորհային ծրագիր](#)
- [Ջրհեղեղների հետևանքների վերացմանն ուղղված աջակցության ծրագիր \(FMA\)](#)
- [Հրդեհների կառավարման աջակցության դրամաշնորհային ծրագիր \(FMAG\)](#)
- [Հանրային աջակցության \(PA\), Մշտական աշխատանքային կատեգորիաներ \(Գ-Է կատեգորիաներ\)](#)
- [Պոտենցիալ մեծ վտանգ պարունակող ամբարտակի վերականգնման \(HHPD\) դրամաշնորհային ծրագիր](#)
- [Նախաաղետային վտանգների մեղմացմանն ուղղված՝ Կոնգրեսի հատկացումներ \(LPDM\):](#)

Ռիսկերի կառավարման մասին

Վտանգի ռիսկի գնահատումը առանցքային նշանակություն ունի SHMP-ի համար. այդ գնահատումը որոշում է, թե ինչպիսի վտանգներ են խնդրահարույց նահանգի համար, ինչպես նաև գնահատում են դրանց հնարավոր ազդեցությունները Կալիֆորնիայի բնակչության, գույքի և շրջակա միջավայրի վրա: 2023 թվականի SHMP-ի ռիսկի գնահատումը կատարվել առաջատար առկա տվյալների և գիտութենահենք եզրահանգումների հիման վրա՝ ապագա կանխատեսումների և սոցիալապես խոցելի խմբերի նկատմամբ արդարացի մոտեցման նկատառումների հաշվառմամբ:

2023 թվականի SHMP-ի ռիսկերի գնահատումը սահմանվել են.

- Այն վտանգները, որոնք սպառնում են նահանգին,
- Որ տարածքներն ու բնակչությունն են առավել խոցելի այս վտանգների նկատմամբ,
- Ինչ վնաս կարող են պատճառել այս վտանգները ֆիզիկական, սոցիալական, բնապահպանական և տնտեսական ակտիվներին,
- Որպես հետևանք առաջացած վնասի կամ այն ծախսերի արժեքը, որոնցից հնարավոր է խուսափել հետևանքների մեղմացմանն ուղղված ջանքերի շնորհիվ:

2023 թվականի SHMP-ի ռիսկերի գնահատումը տեղական օրենսդիրների համար կարող է ծառայել որպես կարևոր ռեսուրս՝ մեղմացման պլանավորման իրենց ջանքերում: Օրինակ, ռիսկերի գնահատումը կարող է.

- Տրամադրել տեղեկություն նահանգում հայտնի բնական վտանգների մասին,
- Որոշել յուրաքանչյուր վտանգի ընդհանուր տեղակայման և խոցելիության ասպեկտները, որոնք կարող են հաստատվել տեղական տվյալների միջոցով,
- Թվարկել ընթացիկ և հավանական մեղմացման ջանքերի օրինակներ, որոնք նահանգի բնակիչները կարող են ներառել վտանգների հետևանքների մեղմացման իրենց գործողությունների կամ պլանավորման մեջ:

Ի՞նչ է փոխվել 2023 թվականի SHMP-ում նախորդ ծրագրերի համեմատ:

Թեև 2018 թվականի SHMP-ի և 2023 թվականի SHMP-ի միջև հիմնական փոփոխությունները ներկայացված են ստորև, այդուհանդերձ, դուք կարող եք լրացուցիչ տվյալներին ծանոթանալ 2023 թվականի SHMP Հատոր 1-ում, Գլուխ 1.4. «Համալրված ծրագիր. ինչո՞վ է այն տարբերվում», և Հատոր 2-ի Հավելված E-ում՝ «Տարբերությունները նախորդ ծրագրից և ծրագրի վերանայման ստանդարտ ընթացակարգերը»:

Հավասարության և կլիմայի փոփոխության ազդեցությունը

FEMA-ի նորացված [Վտանգների հետևանքների մեղմացման պլանավորման նահանգային քաղաքականության ուղեցույցն](#) ուժի մեջ է մտել 2023 թվականին: Այս ուղեցույցով ընդլայնում են այն միջոցները, որոնցով բնակչության խոցելի խմբերի նկատմամբ հավասարության և կլիմայական փոփոխությունների վերաբերյալ նկատառումները ներառվում են վտանգների հետևանքների մեղմացման նահանգային պլանավորման մեջ: Կալիֆորնիան միշտ առաջատար դիրքորոշում է ունեցել այս թեմաները SHMP-ում ներառելու հարցում, ընդ որում կլիմայի թեման առաջին անգամ ինտեգրվել է 2007 թ-ին, իսկ արդարացի մոտեցման թեման առաջին անգամ ինտեգրվել է 2018-ին: 2023 թ-ի SHMP-ն առարկայական առումով ընդլայնում է այդ ջանքերը, ինչպես հավաստիացնում են այդ հարցերով փորձագիտական խմբերի անդամները:



2023 SHMP-ն ուսումնասիրում է վտանգի հետևանքները ինչպես ընդհանուր բնակչության, այնպես էլ, մասնավորապես, որպես խոցելի խումբ առաջնահերթ համարվող հանրության անդամները, քանի որ վերջիններս բախվում են լրացուցիչ խոչընդոտների և մարտահրավերների, որոնք մեծացնում են վտանգների նկատմամբ նրանց խոցելիությունը: Ավելին, վտանգների հետևանքների ազդեցությանը ենթակա բնակչության այն տոկոսը, որը որոշարկվում է որպես առաջնահերթ ուշադրության արժանի համայնքներում ապրող, օգտագործվում է որպես գործոն յուրաքանչյուր կոնկրետ վտանգի ընդհանուր ազդեցության գնահատականը որոշելու համար: SHMP-ի Խոցելի խմբերի առաջնահերթ ուշադրության ապահովման հարցերով աշխատանքային խումբը պարզել է Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) սոցիալական խոցելիության 2018 թ. ինդեքսը (SVI) որպես SHMP պլանավորման գործընթացի մեկնարկի պահին հասանելի ամենահեղինակավոր տվյալների բազա: Հատկանշական է, որ CDC SVI-ն հանրությանը հասանելի տվյալներից դիտարկում է 15 սոցիալական գործոն: SHMP-ն օգտագործում է այս տվյալների բազան այն աշխարհագրական տարածքները բացահայտելու նպատակով, որտեղ արդարացի արդյունքներ գրանցելու նպատակով գործադրված ջանքերը կարող են առաջնահերթ լինել:

Բացի խոցելի խմբերի նկատմամբ արդարացի վերաբերմունքի նկատառումներից, վտանգների ազդեցության վարկանիշավորման մեջ ներառվում է նաև յուրաքանչյուր վտանգի վրա կլիմայի փոփոխության ազդեցության ցուցանիշը: Մա կարևոր է, քանի որ Կալիֆորնիայում արդեն դիտվում են կլիմայի փոփոխության օրինաչափություններ, ինչի հետևանքով ամբողջ նահանգում լինում են ավելի ծայրահեղ և փոփոխական եղանակային պայմաններ: Կարևոր է հաշվի առնել այս ազդեցությունները ներկա ռիսկը հասկանալու, ինչպես նաև ապագայում դրա փոփոխությունների ընթացքը տեսնելու համար:

Հետաքրքրություն ներկայացնող վտանգներ

2018 թվականի SHMP-ում կա 30 վտանգի վիճակագրություն: Օրենսդրական պահանջներով պայմանավորված՝ 2018 թվականի SHMP-ի մշակումից և Ծրագրի վերակազմակերպումից հետո առաջացող վտանգների տեսանկյունից 34 վտանգի մասին վիճակագրական տվյալներ են գրանցված 2023 թվականի SHMP-ում: 2023 SHMP-ում վտանգները բաժանում են երկու խմբի.

1. Հետաքրքրություն ներկայացնող բնական ծագման վտանգներ.
 - կազմակերպվում են վտանգի ազդեցության գնահատման վերլուծության միավորներով,
 - թվարկվում են վտանգի ազդեցության վարկանիշի հիման վրա, ինչպիսի որակական ու քանակական գործոններ են դուրսբերված, ընսմին քանակական տվյալները որոշակի վտանգի առկայության դեպքումավելի ծանրակշիռ են լինում:
 - Ընդգրկված են այն բնական վտանգները, որոնց համար FEMA-ն կտրամադրի Վտանգների հետևանքների մեղմացման աջակցություն (HMA) դրամաշնորհային ֆինանսավորում իրավասու լինելու դեպքում:
2. Հետաքրքրություն ներկայացնող այլ վտանգներ
 - Կազմակերպվում են վտանգի ազդեցության գնահատման վերլուծության միավորներով:
 - Ավելի մեծ կշիռ է տրվում որակական գործոններին, քանի որ մի շարք վտանգներ նվազ կայուն քանակական տվյալներ են ունենում:
 - Կարևոր վտանգներ են, որոնք պետք է հաշվի առնել, սակայն դրանց հետևանքների մեղմացման համար HMA դրամաշնորհային ֆինանսավորում չի հատկացվի:



2023 թվականի SHMP-ում Հետաքրքրություն ներկայացնող բնական ծագման վտանգները դասակարգվում են հետևյալ կերպ.

1. Երկրաշարժ
2. Գետամերձ, գետերի և գետաբերուկների հեղեղումներ
3. Մաստիկ շոգ
4. Մաստիկ ցուրտ կամ սառեցում
5. Անտառային հրդեհներ
6. Ուժեղ քամի, մթնոլորտային տեղումներ և փոթորիկ
7. Ծովի մակարդակի բարձրացում, առափնյա հեղեղումներ և էրոզիա
8. Սողանքներ, սելավներ և այլ հեղեղումներ
9. Երաշտ
10. Ցունամի և սելջ
11. Ամբարտակի փլվածք
12. Ջրապատնեշի ճեղքվածք
13. Ձնահոսք
14. Գրունտի իջվածք
15. Հրաբուխ

2023 թվականի SHMP-ում Հետաքրքրություն ներկայացնող այլ վտանգներ դասակարգվում են հետևյալ հերթականությամբ.

1. Հրդեհ քաղաքային շինություններում
2. Էլեկտրաէներգիայի անջատումների այլ հնարավոր պատճառներ
3. Էլեկտրաէներգիայի անջատումներ բնակչության անվտանգության նկատառումներով (PSPS)
4. Ահաբեկչություն
5. Օդի աղտոտում
6. Էլեկտրաէներգիայի դեֆիցիտ
7. Կիրճեր սպառնալիքներ
8. Ծառերի անկում
9. Ինվազիվ և վնասակար տեսակներ
10. Էպիդեմիկ, պանդեմիկ և վարակիչ հիվանդություններ
11. Քաղաքացիական անկարգություններ
12. Բնական գազի գազատարի անսարքությամբ պայմանավորված վտանգներ
13. Վտանգավոր նյութերի արտանետումներ
14. Տրանսպորտային դժբախտ պատահարի հետևանքով տեղի ունեցած պայթյուն
15. Հորատանցքերի փորում և երկրաբանական շերտի խզվածք
16. Նավթի արտահոսք
17. Էլեկտրամագնիսական ինպուլսների գրոհ
18. Ռադիոլոգիական աղետներ
19. Գեոմագնիսական փոթորիկ (տիեզերական եղանակ)

Հատոր 1 և Հատոր 2.

Պատմականորեն SHMP-ը ընդգրկում փաստաթուղթ է. այսպես, 2018 թվականի SHMP-ն միայն մի քիչ է պակաս 1100 էջից, իսկ 2023 թվականի SHMP-ը գրեթե 2000 էջ է: Թեև SHMP-ը կարևոր փաստաթուղթ է, որն ամբողջ նահանգում լայնորեն կիրառվում է, Ծրագրի ծավալով և համալիր կամ տեխնիկական բովանդակությամբ պայմանավորված՝ պոտենցիալ շահագրգիռ կողմերը կարող են ձեռնպահ մնալ իրենց ջանքերին աջակցելու նպատակով Ծրագրի կիրարկումից:



SHMP-ի կիրառման արդյունավետության բարելավման կարևոր ուղիներից մեկը, որն օգտագործեց Cal OES-ը, այդ ծրագիրը երկու մասի՝ երկու հատորի բաժանելն էր: Հատոր 1-ը հիմնական ծրագիրն է, որը մատչելի լեզվով կարևոր տեղեկություններ է տրամադրում՝ շեշտված ընթեռնելիությամբ և տերմինների կիրառմամբ, որոնք տրված են Հատորի վերջում հրատարակված բառարանում: Հատոր 2-ը բաղկացած է բազմաթիվ տեխնիկական հավելվածներից և տվյալների աղյուսակներից, որոնք օժանդակում և ընդլայնում են 1-ին հատորի տեղեկությունը:

Ինչպե՞ս է լրամշակվել 2023 թվականի SHMP-ը:

2023 թվականի SHMP-ի լրամշակման աշխատանքների համադասամբ զբաղվել է Cal OES-ի Վտանգների հետևանքների մեղմացման նահանգային պլանավորման (SMP) բաժինը: Այս աշխատանքն իրականացվել է դաշնային, նահանգային, ցեղային էթնիկ հանրությունների, տեղական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչ գործընկերների և հանրության հետ սերտ համագործակցությամբ: Լրամշակման գործընթացի ժամանակ տեղի են ունեցել համադասման ավելի քան 100 հանդիպումներ գործընկերների հետ՝ հատուկ վտանգների վերաբերյալ ոլորտի փորձագետներից կարծիքների ներառմամբ և հրապարակային մեկնաբանությունների շրջանով, ընդամին վերջինիս ընթացքում ստացվել են ավելի քան 1000 յուրահատուկ մեկնաբանություններ:

SMP բաժինը նաև վերահսկում է SHMP-ի ապահովումն ու իրականացումը: Դա նշանակում է հետևել SHMP-ում մանրամասն նկարագրված գործողությունների առաջընթացին, արձանագրել նահանգային գործընկերների ձեռնարկած վտանգների հետևանքների մեղմացման լրացուցիչ ջանքերը և վերլուծել, թե ինչպես են վտանգների հետևանքների մեղմացման այս աշխատանքներն օգնում հասնել SHMP-ում նշված Նպատակներին: Այս աշխատանքը տեղեկացնում է SHMP-ի ցանկացած փոփոխության մասին, որն անհրաժեշտ է կատարել լրամշակումների միջև, և հիմք է հանդիսանում Ծրագրի հետագա տարբերակների ուղղորդման համար:

Ներգրավում և լրացուցիչ ռեսուրսներ

SHMP-ի արդյունավետությունը պայմանավորված է կատարված ներդրումներով և ներգրավված մարդկանցով: SHMP-ի իրականացման գործընթացին կամ ապագա լրամշակումներին մասնակից լինելու համար կամ ցանկացած հարցերի դեպքում խնդրում ենք կապվել SMP բաժնի հետ SHMP@CalOES.ca.gov հասցեով:

Վտանգների հետևանքների մեղմացման պլանավորման և ֆինանսավորման, SHMP-ի և տեղական պլանավորման ռեսուրսների հետ կապված լրացուցիչ հարցերով խնդրում ենք այցելել [Cal OES Վտանգների հետևանքների մեղմացման պլանավորման բաժնի](#) վեբկայքը: